ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ՊՐԵՍՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/01 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
45	Պրեմիում ֆուդ ՍՊԸ	Կոմպոտ մրգային/ տարբեր տեսակի մրգերից/ ` պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ` նստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավելի և ոչ պարզ` 0,8% ոչ պակաս: Անպայման լինի կոմպոտ, այլ ոչ մրգահյութ:Համաձայն ԳՕՍՏ Ռ 52184-2003, ԳՕՍՏ Ռ 52185-2003 կամ ԳՕՍՏ Ռ 52186-2003ստանդարտացման փաստաթղթի,1-2 լիտրանոց տարայով: Փաթեթավորման մակնշումը լինի ընթեռնելի: Անվտանգությունը փաթեթավորումը, մակնշումը և նույնականացումը՝ համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 882 որոշմամբ ընդունված «Մրգերից և բանջարեղենից ստացված հյութամթերքի մասով» (ՄՄ ՏԿ N 023/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ N 022/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012),

		Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի: Գործարանային փաթեթավորմամբ: Պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահին ոչ պակաս քան 70 %: Ընդունել ի գիտություն, մատակարարումը պետք է իրականացվի տվյալ սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով, որոնք, համաձայն ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված ժամանակացույցի, պետք է ունենան սանիտարական անձնագրեր: Սննդամթերքի մատակարարման դեպքում տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանություն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանությունները շտկելու ժամկետ է սահմանվում 1 օրացուցային օր:Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: " Մատակարարման հստակ օրը կսահմանվի նախապես, պատվիրատուի կողմից, ոչ ուշ քան 3 օրացուցային օր առաջ՝ պահանջագրով, էլեկտրոնային փոստով: Մատակարարումն անհրաժեշտ է իրականացնել պատվիրատուի կողմից ներկայացված պահանջագրով սահմանված օրը (երկուշաբթի կամ երեքշաբթի), ժամը 8։30-ից մինչև 16։30-ը։ Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագիրը և բոլոր մթերքների սերտիֆիկատները ներկայացնել առաջին մատակարարման ժամանակ: Սնունդը մատակարարելիս անհրաժեշտ է, որ համապատասխան անձը ներկայանա անձը հաստատող փաստաթղթով և մատակարարող կազմակերպության կողմից տրված լիազորագրով: Անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կազմվում է արձանագրություն, որը պարտավորվում է ստորագրել սնունդը մատակարարող կազմակերպության լիազորած ներկայացուցիչը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ПРЕСТИЖ-ФУД ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ26/01 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
45		